

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արեւելցու վերաբերմունքը՝ դեպի «բարեւարեները».—Հարստութեան հասարակական ծագումը.—Հասարակութիւնը բարոյական յրաւունք ունի բարեզործութիւն պահանջելու հարուստներից.—Խրանց եկամուտը ո՞ր մասն են նորինում մեր բարեզործները.—Նիւրական ոյժի հասարակական սահմանադրումը.—Մայրենի լեզուի հշանակուրիմը ժողովրդական դպրոցներում.—Պարքերական մասույի հարիւամակը Խուսասանում.—Ֆիճանսների միենասրի կերպումը.—Նոր հայերէն բերք.—Հայոց հոգեւոր վարչութեան դատը:

Խնկարկել մարդկանց, որոնցից շահ ևս սպասում—զա առաւելապէս ստրկահոգի արենելցուն է յատուկ, Արենելցին կարծես չի էլ զիտակցում թէ իր այդ վորմունքի մէջ որքան ստորութիւն կայ, Այդ անզիտութիւնն է պատճառ որ մեղանում շատ հեշտ է «բարեգործ անունը վաստակել. բաւական է որ մէկը իր անազին հասոյթներից մի փշրանք չպրտէ հասարակութեան և այդ վերջինը սպատրաստ է մինչև երկինք բարձրացնել նուիրատութիւն, իր զլիի վրայ տեղ տալ նրան. Այլ ևս որ «ապկրախար» կը համարձակուի քննադատել «բարերարի» արարքները: Եւ անա սահղծւում է մի այնպիսի ստորաքարշ վերաբերմունք գէպի հարուստ բարերարը որ այս վրրջինը սկսում է երեակայել իրան մի մեծութիւն, մի կուռք, որի քմահաճոյքին անզամ պէտք է համակերպուի հասարակութիւնը: Հասարակական անչափ յարգանքները այդպիսով անբարոյականացնող են երկու կողմերի համար էլ, թէ տուողի և թէ ընդունողի, ուստի պէտք է որոշել հասարակութեան արժանավայել վիրաբերմունքը դէպի բարեգործները:

Սնշուշտ այս կամ այն անձնաւորութիւնը իսկապէս մեղաւոր չէ որ յայտնի հասարակական-տնտեսական պայմանների չնորհիւ ներկայումս դրամական ոյժը չէ մնում հասարակու-

թեան մօտ, այլ կենտրօնանում է միքանի անհատների ձեռքում, և դրանով ստեղծում են երկու ծայրայեղ բնեոներ, մի կողմից անրաւ հարստութիւն, իսկ միւս կողմից՝ անծայր աղքատութիւն։ Այդ գրութիւնը, պէտք է հաւատալ, անցողական է, ինչպէս անցողական էին հասարակական զարգացման այն ֆաղիսները, երբ տիրում էր սարկութիւն և ճորտութիւն։ Սակայն հէնց բոլոր հարցը նրանում է որ սարկութեան և ճորտութեան ժամանակ ևս իշխողները չէին զիտակցում թէ իրանց փայելած իրաւունքը անարդարութեան հիմքերի վրայ է կառուցուած։ Երբ մասսան սկսեց գիտակցել այդ բանը—վերջ զրուեց և տըմարդի հարստահարութեան։ Նոյնը և այժմ։ գրամական ոյժի տէր անհատները չեն զիտակցում թէ բախտի բերմամբ իրանց ձեռքը գցելով հասարակական պայմաններով ստեղծուած նիւթական ոյժը—բարոյական իրաւունք չունեն իրանց տիրացածի մէջ ուրանալ հասարակական մասը։

Անապատում մեն-մենակ թափառող մարդը չի կարող հարստութիւն դիզել, զրա համար հարկաւոր են՝ բազմաթիւ անհատների համախմբուած դոյութիւն, կեանքի և դոյքի ապահովութիւն, հաղորդակցութիւններ, զիտութիւն և տեխնիկա։ Այդ, այդ բոլորը չէ որ հասարակութեան, նոյն իսկ դարերի ընթացքում համայն մարդկութեան լաւագոյն ոյժերի ստեղծած հանգամանքներ են։ Հասարակական կարգերի ներկայ անկատարելութիւնն է պատճառ որ հասարակութեան և մարդկութեան ըստեղծած այդ պայմաններից և մասսայի աշխատանքից օգտուած են միայն անհատները։ Այդ անկատարելութիւնը մի անփոփոխ մշտական դրութիւն չէ։ Միայն պէտք է որ ընդհանրութիւնը զիտակցէ այդ, և այն ժամանակ աւելի արագ կերպով առաջ կը դայ բարեշրջում ներկայ պայմանների մէջ։ Այսօր մենք տեսնում ենք բազմաթիւ ասեարական-արդիւնաբերական ձեռնարկութիւններ, որոնք անցել են տէրութեան և հասարակական ինքնավարութիւնների ձեռքը, ուրեմն կեանքը արդէն զարգանում է յայսմի ուղղութեամբ։ Եւ երբ այդ ուղղութիւնը աւելի ևս մեծ ծաւալ ստանայ—կարիք էլ չի լինի հասարակութեան սպասել անհատների նուիրաւութիւններին, յոյս դնել մասնաւոր բարեգործութեան վրայ։ Ինքը աէրութիւնը, հասարակութիւնը կ'ունենան բաւականաչափ միջոցներ սեպհական ոյժերով հոգալու։ Հասարակական բոլոր կարիքները։ Սակայն քանի դեռ չենք հասել այդ իդէալական գրութեան, պէտք է անհատական բարեգործութիւններին ես մեծ նշանակութիւն տալ։

Վերև բերած տեսակէտները եթէ ի նկատի ունենան թէ նուիրաւունքը և թէ ընդունողները, կ'իմանան որ մէկը տա-

լով իսկապէս կատարում է իր բարոյական պարտականութիւնը, որովհետև նա օգտում է ներկայ հասարակական անկատար կազմութիւնից և սեփականացնում մի բարիք, որ հանրային ծագում ունի, իսկ միւսը ընդունելով այդ նուէրները, կարիք չունի շողօքորթելու և քծելու, որովհետև ստանում է այն, ինչ որ իսկապէս այլ պայմաններում պէտք է պատկանէր իրան։ Այնուամենայնիւ, ի հարկէ, չնորակալութեան արժանի է իր պարագը գիտակցող հարուստը։ Սակայն չնորհակալութեան և քծնութեան մէջ սարեր ու ձորեր կան։

Մի այլ կէտ ևս չը պէտք է մոռանալ «բարերար» անունը սրան-նրան տալու ժամանակ։ Վերցնենք մի օրինակ։ Մեզանում շատ կան մի կամ երկու միլլիօն ունեցող հարուստներ, թէն ունենք նաև 20—40 միլլիօնատէր անհատներ։ Այն ինչ պէտք է ասենք միլլիօնաբիրոց համար, եթէ բազմապատկէք, կը ստանաք և աւելի ունեցողների նկատմամբ...

Դիցուք մէկը ունի մի միլլիօն կարողութիւն։ Ներկայ պայմաններում նա հանգիստ կերպով կարող է այդ կապիտալից ստանալ տարեկան 100,000 ր. եկամուտ։ Եթէ այդ պարոնը անօրմալ մարդ չէ, նա իր կուլտուրական պահանջներին առատօքն բաւականութիւն կարող է տալ տարեկան 20 հազարով, իսկ եթէ աւելի կիրթ ու ինտելիգէնտ ճաշակի տէր լինի նա, այդ գէպում և շատ աւելի պակաս մի գումարով։ Մնում է ուրիշն աւելորդ գեռ 80,000 ր.։ Այդ գումարը համարձակ կերպով կարող է նա նուիրել հասարակութեան, առանձին ոչինչ չը կորցընելով և չը փանգելով թէ իր և թէ իր ժառանգների մշտական փառաւոր ազգուստը։ Բայց նա, սովորաբար, տպիս է հասակութեան միքանի հարիւր կամ երկու երեք հազար րուբլի և լսում հիացմունքի և փառաբանութեան ձայներ, մնացած ազահարար պահում իր համար։ Իսկապէս, ինչ էր նրա արածը, միթէ իր կարողութեան համեմատ նոյնը չէ անում մի չքաւոր արհեստաւոր, որ իր տասնեակ րուբլիներից կոպէկներ կամ ըսուբլիներ է տալիս նոյն նպատակներով։ Ինչու հրճուանքով չեն յիշատակում նրա անունը, «մեկենաս», «բարերար» չեն անուանում նրան։ Չէ որ, ուղիղն ասած, աւելի ծանր է չքաւորի համար տալ միքանի ըսուբլիներ, քան միլլիօնատէրի համար իր ստացած տոկոսներից տոկոսի չնշին մասից բաժանուել։ Միթէ իրաւ կարելի է բարեգործութիւն համարել այն չնշին նուէրները, որ իբրև փշրանքներ գցում են մեր հարուստները հասարակութեան առաջ։ Ի հարկէ ոչ, այդ փշրանքներով չօշափելի գործ չէ կարելի կատարել, մինչդեռ ինքը երեսյթը, ընդունուած ձեռվ ու հանգամանքներով, լոկ անբարոյականացնում է հասա-

րակութիւնը, մուրացկանութեան ու աչք անկելու վարժեցնելով նրան։ Մի բան ևս աւելորդ չէ նկատել։

Անհատների ձեռքում կենարնացած ոյժը յաճախ գործադրութեամ է նաև հասարակական շահերի դէմ։ Էլ չենք ասում այն բանի մասին, որ անհկատելի կերպով կապիտալիզմը ստրկացընում է իրան թէ գիտունին, թէ տգէտին։ նա շատ անգամ առանց քաշուելու օգտութեամ է ոսկու ոյժից իր եսական-անափառական ձգտումների համար։ Ներթական ոյժի այդ կամացականութեան դէմ արդէն սկսել է միջոցներ առնել արևմտեան արթուր ինքնաճանաչութիւնը։ Այդպէս, օրինակ, նորերս, Ձրանսիայի ազգային ժողովը անվաւեր համարեց մի միլիօնատէրի (Fould) պատգամաւորական ընտրութիւնը, որովհետև յայտնի էր թէ Մամնայի այդ գուողացած ներկայացուցիչը բացարձակօրէն կաշառում էր ընտրողներին, տեղական թերթերին իրան փառաբանել էր տալիս իրուր չեն Ս.մերիկայում, ուր միլիարդատէրերը այսօր հասարակական ազատ կարգերի համար վըտանգաւոր տարր են ներկայացնում, հարց գրել առհասարակ սահմանափակել մասնաւոր անհատի նիւթական կարողութիւնը որոշ չափերով... զրանից թէ տէրութիւնը, թէ հասարակութիւնը և թէ նոյն իսկ իրանց միլիօնատէրերի մարդկայնութիւնը միայն կարող են շահուել...

Յունուարի 14-ին, Կովկասեան Գիւղատնտեսական նիստում լսուեց Ն. Ա. Սուլթան-Կըրըմ-Գիրէյի և Ա. Ի. Նատրօնիի զեկուցութեամ «այլազգիների դպրոցներում տեղական լեզուներով ուսուցման և զրանշանկութեան մասին՝ գիւղատնտեսական գիտելքներ և հմտութիւններ տարածելու գործում»։

Գիւղատնտեսական զարգացման անշարժութեան զիստուր պատճառը մեր հարուստ երկրում համարելով ժողովրդի տպիտութիւնը, զեկուցանողները անհերքելի փաստերով ապացուցեցին որ ժողովրդական դպրոցներից աւելի մեծ արդիւնքներ ստանալու համար պէտք է նրանց մէջ զաստութիւնը կատարուի մայրէնի լեզուով։

Զեկուցման մէջ ի միջի այլոց առաջ էին բերուած Ալէքսանդր Ա-ի հրովարտակից (1867 թ.) հետեւեալ նշանաւոր խօսքերը։

«Մանկավարժականի վերաբերմամբ կառավարութեան հողարքածութեան է լինի պատասնեկութեան մէջ առողջ զիտելիքների տարածութեամբ, զարգացութեամբ նրա մէջ սէր գէպի խելացի աշխատանքը, հիմնաւոր գիտական կրթութիւնը։ Չը թողլ տալով ոչ ինձ, ոչ էլ որեէ մէկին դարձնել զիտութեան սերմնարանները

գործիք՝ քաղաքական նպատակների հասնելու, դպրոցական վարչութիւնները պէտք է ի նկատի ունենան միմիայն անշահ ծառայութեան լուսաւորաւթեան, միշտ բարւոքելով ընդհանուր դաստիարակութեան սիստեմը... Ազգութիւններից իւրաքանչիւրը պէտք է պաշտպանուած լինի ամեն մի բռնի ուսնձգութիւնից, ուստի անհրաժեշտ է հոգ տանել իւրաքանչիւր աղգութեան համար առանձին դպրոցներ հիմնելու մասին և ընդհանուր, մանաւանդ ուսուական դպրոցներում, դասաւանդութիւնը վարել ազգաբնակութեան մհծամասնութեան մայրենի լեզուով»:

Բացի Սրեմտեան Եւրոպալի համողեցուցիչ վաստերից, ականաւոր մանկավարժների և գիտնականների կարծիքներից ըերւում էր իրրե ապացոյց և Յինամզգարեան դպրոցի երկարամեայ փորձը: Առ մասնաւոր գիւղատնտեսաւական ուսումնարանում վարչութեան թոյլտութեամբ բոլոր առարկաները աւանդուում են վրաց լեզուով համաձայն նրա կանոնների 21-րդ յօդուածի: Եւ հետեանքները փացլուն են, ինչպէս այդ հաստաւուում է դպրոցական վարչութեան հեղինակաւոր վլայալթիւններից:

Ի վերջոյ զեկուցուումը առաջարկում է հետեալը. 1) Զորաամեայ դասընթաց ունեցող միջասեան դպրոցներում առաջին երեք տարիների ընթացքում, իսկ վեցամեայ դասընթաց ունեցող երկդասեան դպրոցներում առաջին երեք տարիների ընթացքում բոլոր առարկաների ուսուցումը վարել սովորողների մայրենի լեզուով, աւանդելով և մայրենի վեզուն իրրե առանձին դպրոցական առարկայ ամեն օր ամբողջ դասընթացքի տեսդութեան ժամանակ. 2) Ապահովել ուսուաց լեզուի ուսուցումը, դրա համար ամբողջ դասընթացքում, սկսած առաջին տարուայ երկրորդ կիսամեակից, ինչպէս և բացի կրօնից բոլոր առարկաների դասաւութիւնը միդասեան դպրոցներում վերջին տարին, իսկ երկդասեաններում վերջին երկու տարեն—կատարել ուսուաց լեզուով: 3) Միջնորդեկան աեղական միջոցներից աւելի գումար յատկացնելու ժողովրդի կրթութեան. 4) դպրոցներին կից բանալ զրադարան-ընթերցարաններ, գիւղատնտեսաւական հանրամատչելի գրքերով, իսկ ուր միջոցները կը ներեն, նաև հասարակ գիւղատնտեսական մուզեումներով և կազմակերպել գիւղատնտեսական զանազան ձիւղերից դաստիութիւններ. 5) Մաքերի փոխանակութեան և ուսուցման լաւագործ եղանակների հետ ծանօթացնելու նպատակով, իւրաքանչիւր տարի ժողովրդական ուսուցիչների համաժողովներ գումարել և հիմնել գիւղատնտեսական և մանկավարժական կարճատե կուրսեր. 6)

Լաւագոյն մանկավարժական ոյժեր զրաւելու և պահելու համար բարւոքել ժողովրդական ուսուցիչների նիւթական և հասարակական դրութիւնը:

Աղմկալի ծափահարութիւններով ծածկուեց զեկուցումի ընթերցանութիւնը. Ընդհանուր ժողովը որոշեց չնորհակալութիւն յայտնել և ի նկատի ունենալ նրան:

Յունուարի 26-ին լրացաւ ոուսաց պարբերական մամուլի երկու հարիւրամեակը, որի հիմքը դրեց Մեծն Պետրոսը: Պարբերական մամուլը Ռուսաստանում սկիզբն առաւ իրեն պետական գործ, բայց յետոյ կամաց կամաց անցաւ և հասարակութեան ձեռքը: Զը նայած ուրոյն պայմաներին, որոնց մէջ գորնում էր մամուլը Ռուսաստանում, նա, այնուամենայնիւ, այս երկու հարիւր տարուայ ընթացքում հոկայական առաջադիմութիւն արաւ և ահազին ազգեցութիւն ունեցաւ ոուս հասարակական մաքի զարգագման և ինքնաճանաչութեան արթնանալու գործում: Ռուսաց մամուլի մեծագոյն մասը աղնիւ կերպով է ծառայում իր կոչման, միշտ ժողովրդի շահերի և արդարութեան ջառագով հանդիսանալով և, որքան թողլ են տալիս հանգամանքները, մերկացնելով հասարակական չարիքները: Ռուս մամուլի ընթերցողների թիւը այսօր մի քանի միլիոնների է հասնում, բնականաբար նրա ազգեցութիւնը այնքան մեծ է որ նրան կարելի է համարել ներքին կեանքի նշանաւոր գործօններից մէկը: Կարելի է ցանկալ որ աւելի ևս բարեյաջող պայմանների մէջ շարունակուի այդ գործօնի կատարելիք դերը այս բազմացեղ կօլոս պետութեան կեանքում:

I. ԱՍՐԳԱՆԵԱՆ

Յունուար 25.

Ֆինանսների մինիստր ստատուս-սեկրետար Սէրգէյ Վիտաէի առենահապատակ զեկուցման մէջ 1903 թւականի համար պետական հասոյթների և ծախքերի ընդհանուր հաշւեկշիռը արուած է հետեւալ կերպով. *)

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Ս Ո Յ Թ Ն Ե Ր

I

Սովորական հասոյթներ

- | | | |
|------------------------------|-------|---------|
| 1) Ռւղղակի հարկեր | 132,0 | միլ. ր. |
| 2) Կողմնակի հարկեր | 405,9 | » » |

*) Առաջ ենք բերում միայն միլիոնները, իսկ ընդհանուր գումարում և՛ ճիշտ գումարը: